ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

քաղաք Հրազդան *14 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թ.*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Վիգեն Գրիգորյանը, Ռուստամ Մկրտչյանը, Ռոմիկ Ներսիսյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վարուժան Սաֆարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռոբերտ Դանիելյանը

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N08 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի.

Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 14-ի N 08 արտահերթ նիստի օրակարգը.

1.Մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին
2.Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողով ստեղծելու մասին
3.Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին
4.Ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին
5.Փոխադրամիջոցների գույքահարկի գումարները վերադարձնելու մասին
6.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին
7.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

8.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
9.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
10.Հրազդան քաղաքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N132 և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 18-ի N44 որոշումների մեջ լրացումներ կատարելու մասին
11.Դերենիկ Պողոսյանին վարձակալության իրավունքով տրամադրված բնակավայրերի նպատակային նշանակության հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
12.Հողամասի և նրա վրա գտնվող գույքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության մասին
13.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին
14.Հրազդան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օտարելու մասին

Կողմ-9 Դեմ-0 Չեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99/

Լսեցին
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.
1) Վարուժան Սաֆարյան՝ համայնքի ղեկավարի տեղակալ,
2) Ռոբերտ Դանիելյան՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,
3) Գուրգեն Հակոբյան՝ համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետ,
4) Գոռ Մաթևոսյան՝ համայնքապետարանի աշխատակազմի հարկային բաժնի պետ,
5) Արևիկ Եփրեմյան՝ համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ,
6) Պետիկ Մարգարյան՝ համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետի տեղակալ,
7) Խաչիկ Մուրադյան՝ համայնքի ավագանու անդամ,
8) Հովիկ Պողոսյան՝ համայնքի ավագանու անդամ:
2. Ամուրդավար նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ Վարուժան Սաֆարյանին:

3. Արձանագրող նշանակել համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Լուսինե Զաքարյան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100/

Լսեցին
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԸ ՔՆՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 216 հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

1. Հաստատել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 10-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողով ստեղծելու մասին» N 59 որոշումը:
3. Սույն որոշումն ուժիմեջէմտնում ստորագրմանօրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101/

Լսեցին
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ և 12-րդ կետերով.

1. Հաստատել Հրազդան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 10-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին» N 58 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102/

Լսեցին
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածով.

1. Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 575 տան բնակիչ Վարդան Հովհաննիսյանին հատկացնել 80000/ութսուն հազար/ դրամ գումար տանիքը վերանորոգելու համար:
2. Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 543 տան բնակիչ Վաչիկ Գրիգորյանին հատկացնել 120000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ գումար տանիքը վերանորոգելու համար:
3. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 9/2 տնակի բնակիչ Վաչագան Զոգանյանին հատկացնել 140000 /մեկ հարյուր քառասուն հազար/ դրամ գումար տանիքը վերանորոգելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Չեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103/

Լսեցին
ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ
ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և Կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N920-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 93 շենքի 44 բնակարանի բնակիչ Մարտիրոս Սահակյանի 2020 թվականի հուլիսի 30-ի N4-705, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 114 շենքի 39 բնակարանի բնակիչ Վահան Մարտիրոսյանի 2020 թվականի օգոստոսի 3-ի N4-708 դիմումները.

1.Հրազդանի համայնքապետարանի 900125001215 հաշվեհամարին որպես փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարված գումարից հետ վերադարձնել վաճառքից հետո առաջացած գերավճարի չափով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 93 շենքի 44 բնակարանի բնակիչ Մարտիրոս Սահակյանին 14042/տասնչորս հազար քառասուներկու/ դրամ գումար, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 114 շենքի 39 բնակարանի բնակիչ Վահան Մարտիրոսյանին 32125/ երեսուներկու հազար մեկ հարյուր քսանհինգ/ դրամ գումար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Չեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների.

1.Աճուրդային կարգով օտարել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող հետևյալ հողամասերը.

1)Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց 22/10 հասցեում գտնվող 24.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0513-0115):

2)Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց 22/11 հասցեում գտնվող 24.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0513-0116):

3)Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 15/15 հասցեում գտնվող 121.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0513-0114):

4) Կենտրոն թաղամաս 83/12 հասցեում գտնվող 48.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 180 000 (մեկ հարյուր ութսուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001- 0458-0122):

5) Կենտրոն թաղամաս 44/14 հասցեում գտնվող 29.1 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 220 000 (երկու հարյուր քսան հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0452-0240):

6)Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց 27/1 հասցեում գտնվող 24.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝07-001-0439-0088):

7)Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց 27/2 հասցեում գտնվող 36.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 300 000 (երեք հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0439-0087):

8)Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց 12/2 հասցեում գտնվող 48.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 300 000 (երեք հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝07-001-0458-0123):

9)Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց 61 հասցեում գտնվող 24.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 240 000 (երկու հարյուր քառասուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝07-001-0456-0045):

10)Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 5/4 հասցեում գտնվող 150.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 500 000(հինգ հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝07-001-3458-0009):

11)Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 5/5 հասցեում գտնվող 225.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 700 000 (յոթ հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-3458-0008):
12)Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 5/6 հասցեում գտնվող 225.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 700 000 (յոթ հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-3458-0005):
13)Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 5/7 հասցեում գտնվող 450.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-3458-0007):
14)Զրառատ թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերից 5.89 հա մակերեսով հողամասը՝ 7 000 000 (յոթ միլիոն) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝07-001-0873-0007):
2.Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5%–ի չափով:
3.Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի.

1.Թույլատրել մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող
1)Հարավային թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.007 հա հողամասը (այլ հողատեսք)՝ 4000 (չորս հազար) դրամ մեկնարկային վարձավճարով, 25 (քսանհինգ) տարի ժամկետով (կադաստրային ծածկագիր 07-001-4551-0002):
2)Հարավային թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.42983 հա մակերեսով, երկրորդ կարգի, անջրդի վարելահողը՝ 170 000 (մեկ հարյուր յոթանասուն հազար) դրամ մեկնարկային վարձավճարով, 25 (քսանհինգ) տարի ժամկետով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0786-0095):
3)Հարավային թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.69868 հա մակերեսով հողամասը (այլ հողատեսք)՝ 268 000 (երկու հարյուր վաթսունութ հազար) դրամ մեկնարկային վարձավճարով, 25 (քսանհինգ) տարի ժամկետով

(կադաստրային ծածկագիր՝ 07-001-0787-0006):
4)Հարավային թաղամասի Երևան-Սևան մայրուղի 51/1 հասցեում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2.2761 հա մակերեսով հողամասը (այլ հողատեսք)՝ 862 000 (ութ հարյուր վաթսուներկու հազար) դրամ մեկնարկային վարձավճարով, 25 (քսանհինգ) տարի ժամկետով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0763-0005):
2.Մրցույթի մասնակցության մուտքի վճարը սահմանել 2000 (երկու հազար) դրամ:
3.Մրցույթի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 % - ի չափով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի.

1.Թույլատրել մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված, Միկրոշրջան թաղամաս 29/17 հասցեում գտնվող 24.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 8000 (ութ հազար) դրամ մեկնարկային վարձավճարով: Մրցույթի մասնակցության մուտքի վճարը սահմանել 2000 (երկու հազար) դրամ, մեկ քայլի չափը սահմանել 1000 (մեկ հազար) դրամ՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով (կադաստրային ծածկագիր՝07-001-0455-0038):
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի «ա» ենթակետի պահանջների.

1.Ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված, բնակավայրերի նպատակային նշանակության հետևյալ հողամասերը.
1)Միկրոշրջան թաղամաս, 8-րդ փողոց 30/2 հողամասը՝ 16.0 քմ (տնտեսական շինություն կառուցելու)՝ 5000 (հինգ հազար) դրամ տարեկան վարձավճարով, 99 (իննսունինը) տարի ժամկետով:
2)Միկրոշրջան թաղամաս 17/3 հողամասը՝ 20.0 քմ (ավտոտնակ կառուցելու)՝ 5000 (հինգ հազար) դրամ տարեկան վարձավճարով, 99 (իննսունինը) տարի ժամկետով:
3)Միկրոշրջան թաղամաս 210/9 հողամասը՝ 19,9 քմ (ավտոտնակ կառուցելու)՝ 5000 (հինգ հազար) դրամ տարեկան վարձավճարով, 99 (իննսունինը) տարի ժամկետով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N132 ԵՎ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N44 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին » օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի.

1. Հրազդան քաղաքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 9-ի «Հրազդան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին» թիվ 132 որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետում «վարձավճարով» բառից հետո լրացնել «99 տարի ժամկետով» բառերը:
2. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 18-ի «Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0.21312 հա մակերեսով հողամասը և դրա վրա առկա կիսաքանդ շինությունը նվիրաբերության կարգով Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու մասին» թիվ 44 որոշումը լրացնել 4-րդ կետով հետևյալ խմբագրությամբ.
«4.Առաջարկել Պետական գույքի կառավարման կոմիտեին պետական սեփականություն հանդիսացող հողամասից 0.07 հա մակերեսով հողատարածք նվիրաբերել Հրազդան համայնքին՝ որպես ընդհանուր օգտագործման ճանապարհ և այդ հողամասում առկա ինքնակամ շինությունը օրինականացնելու, տնօրինելու նպատակով:»:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109/

Լսեցին
ԴԵՐԵՆԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Դերենիկ Պողոսյանի 2020 թվականի օգոստոսի 12-ի դիմումը.

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Չարենցի նրբանցք 12/1 տան բնակիչ Դերենիկ Պողոսյանին ուղղակի վաճառքով օտարել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 42/15 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող, 24.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (սեփականության (օգտագործման) իրավունքի վկայական թիվ 2563466, տրված 2009 թվականի մարտի 26-ին)՝ 70 560 /յոթանասուն հազար հինգ հարյուր վաթսուն/ դրամ կադաստրային արժեքով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն և 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1597-Ն որոշման, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14 [3] –րդ հոդվածի 9-րդ մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2020 թվականի հուլիսի 14-ին տրված գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ N US-14072020-07-0342 տեղեկանքը և Մինաս Մարտիրոսյանի 2020 թվականի մայիսի 27-ի դիմումը.

1. Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի Մինաս Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 14072020-07-0029) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 6-րդ փողոց 21-րդ նրբանցք 3 հասցեում գտնվող 0.0123 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերից փոփոխել բնակավայրերի, հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, իսկ հողամասի վրա գտնվող կաթսայատան գործառական նշանակությունը արտադրականից փոփոխել բնակելիի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N2550538) Հրազդան համայնքի Կենտրոն թաղամասի 51 հասցեում գտնվող թիվ 14-րդ չգործող մանկապարտեզի շենքից 153,45 քառակուսի մետր և 152,63 քառակուսի մետր մակերեսներով առաջին և երկրորդ հարկերը 3 (երեք) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հայի բռունցք» երիտասարդական մշակութային հասարակական կազմակերպությանը՝ վերանորոգման աշխատանքներ կատարելու պայմանով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի.

1.Հրազդան համայնքում գործող համատիրություններին անհատույց օտարել Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող 0,44 մմ հաստությամբ ցինկապատ ալիքավոր (պրոֆնաստիլ) 3000 քառակուսի մետր թիթեղ և 1000 քառակուսի մետր գլանափաթեթային ջրամեկուսիչ նյութ (իզոգամ) բազմաբնակարան շենքերի տանիքները վերանորոգելու նպատակով՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113/

Ավագանու անդամներ՝

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ռ. Դանիելյանը

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2020 թվականի օգոստոսի 14-ի
N 101 որոշման

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԸ ՔՆՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Հանձնաժողովի նախագահ՝ Ռոբերտ Դանիելյան՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար:

2. Հանձնաժողովի անդամներ.

1) Գուրգեն Հակոբյան՝ համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետ,

2) Տիգրան Նավասարդյան համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժնի պետ,

3) Պետիկ Մարգարյան՝ համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետի տեղակալ,

4) Արայիկ Մարգարյան՝ համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

3. Հանձնաժողովի քարտուղար՝ Լիլիթ Եղիազարյան՝ համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2020 թվականի օգոստոսի 14-ի
N 102 որոշման

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. *Հանձնաժողովի նախագահ՝ Ռոբերտ Դանիելյան՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար:*
2. *Հանձնաժողովի անդամներ.*
   1) *Արմեն Այվազյան ՝ համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ,*
   2) *Լիլիթ Եղիազարյան՝ համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,*
   3) *Լիլիթ Մուրադյան՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,*
   4) *Արայիկ Մարգարյան՝ համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,*
   5) *Նարինե Խչոյան՝ Կոտայքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ,*
   6) *Մարինե Եգորյան՝ Երեխայի և ընտանիքի զարգացման կենտրոն բարեգործական հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն,*
   7) *Թեհմինե Բաղալյան՝ <<Առաքելություն Հայաստան>> բարեգործական հասարակական կազմակերպության Հրազդանի ցերեկային կենտրոնի ղեկավար/սոցիալական աշխատող:*

Հավելված

Հրազդան համայնքի ավագանու

2020թ. Օգոստոսի 14-ի

N 113 որոշման

Ցուցակ

Հրազդան համայնքի համատիրություններին տրամադրվող գույքի

Համատիրության անվանում	ալիքավոր ցինկապատ թիթեղ	չափման միավորը (մ²)	գլանափաթեթային ջրամեկուսիչ իզոգամ	չափման միավորը (մ²)
<<Միլենա>> Ավետիք Հովհաննիսյան	210	մ²	230	մ²
<<Կենտրոն-2>> Ռուստամ Ղազարյան	245	մ²	260	մ²
<< Մարի>> Ղևոնդ Կասպարյան	70	մ²	100	մ²
<<Թեղենիս>> Սուրեն Սարդարյան	390	մ²	120	մ²
<<Կենտրոն-4>> Սամվել Հայրապետյան	130	մ²	160	մ²
<<Կենտրոն Ա-1>> Վիգեն Հարությունյան	520	մ²	130	մ²
<<Միկրոշրջան-7>> Սայադ Գյուրջյան	270	մ²	-	մ²
<<Միկրոշրջան-1>> Ռուդիկ Գրիգորյան	120	մ²	-	մ²
<<Միկրոշրջան-2>> Սերյոժա Կնյազյան	288	մ²	-	մ²
<<Հրազդան-1>> Զավեն Սարգսյան	437	մ²	-	մ²
<<Բանավան>> Արսեն Հարությունյան	110	մ²	-	մ²
<<Միկրոշրջան-6>> Նվեր Ասատրյան	210	մ²	-	մ²
Ընդամենը	3000	մ²	1000	մ²